# «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ-000164. 1-ին դաս

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ՏՐՎԱԾ Է

2024-08-13, «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ

ՀՀ, ՇԻՐԱԿ, ԳՅՈՒՄՐԻ, ԳՅՈՒՄՐԻ, ՇԻՐԱԿԱՑՈՒ Փ., 83, 40 ԲՆ.

Գործողության ժամկետը 13.08.2029թ.

## ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

N 1/175/10-26

<<25>>__մայիսի__2026թ. **ԼԻՑ 17384, ՔՊԼ-000164, 1-ին դաս**

*Պատվիրատու՝ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ*

*Նախագծող՝ <<ՂԱԶԱՐՅԱՆ ՇԻՆ>> ՍՊԸ*

*Տնօրեն՝ Վ. ՂԱԶԱՐՅԱՆ*

**<<ԱՐԽԻՏԵԿՏ>> ՍՊԸ-ն նախագծային փորձաքննությունը դիտարկելով ՀՀ Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջան /Գյուլբենկյան փողոց հ.23 և 25 հասցե/ կոյուղագծերի վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը՝ երաշխավորում է հաստատման:**

Նախահաշվային արժեքը կազմում է՝ 21 002.75 հազար դրամ , ներառյալ ԱԱՀ- ն:

**Առդիր՝ եզրակացությունը 2 էջից:**

**Տնօրեն՝** **Ն. Սիրեկանյան**

*«ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ*
*տնօրեն Ն. Միրեկյան*

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<u>ՀՀ Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջան /Գյուլբենկյան փողոց հ.23 և 25 հասցե/ կոյուղագծերի վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը</u>

*Պատվիրատու՝ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ*

*Նախագծող՝ <<ՂԱԶԱՐՅԱՆ ՇԻՆ>> ՍՊԸ*

*Տնօրեն՝ Վ. ՂԱԶԱՐՅԱՆ*

Սույն նախագիծը կատարված է համաձայն պատվիրատուի կողմից տրված տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

Նախատեսվում է ՀՀ Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջան /Գյուլբենկյան փողոց հ.23 և 25 հասցե/ կոյուղագծերի վերակառուցման աշխատանքների իրականացում:

Նախագծով նախատեսվում է կատարել հետևյալ շինարարական աշխատանքները՝ հողային աշխատանքների իրականացում ձեռքով և մեխանիզմով, ասֆալտբետոնե ծածկույթի քանդում, ավելորդ գրունտի և շինարարական աղբի բարձում ինքնաթափ մեքենաները և տեղափոխում թափոնատեղի, խրամուղու և փոսորակի մշակում գրունտներում մեխանիզմով և ձեռքով, խրամուղիների և փոսորակների լրամշակում ձեռքով՝ հատակի հարթեցմամբ: Ավազե նախապատրաստական շերտի և պաշտպանիչ շերտի իրականացում, պոլիէթիլենե ծալքավոր խողովակների մոնտաժում: Խրամուղու ետլիցք ավազով՝ տոփանումով: Բետոնե վաքերի պատրաստում, երկաթբետոնե հավաքովի կլոր հորի մոնտաժում, երկաթբետոնե հորերի հատակի սալերի տեղադրում, երկաթբետոնե հորերի ծածկի սալերի տեղադրում ՝թուջե ծանր մտոցով: Մետաղական կոնստրուկցիաների տեղադրում և երկշերտ յուղաներկում: Ասֆալտբետոնի շերտի վերականգնում մանրահատիկ և խոշորահատիկ ասֆալտբետոնի ծածկույթով խճային հիմքով:

*<u>Նախահաշվային մաս</u>*

Աշխատանքների նախահաշվային արժեքը ներկայացված է ամփոփ հաշվարկներով
Հաշվարկը կազմում է՝ 21 002.75 հազար դրամ, ներառյալ ԱԱՀ:

Հաշվարկը կատարված է 1984թ. նորմերով և գներով կազմված տեղային նախահաշիվների հիման վրա, կիրառելով աշխատավարձի հաշվարկային ինդեքսը 2427.42 և մեքենաների շահագործման ինդեքսը 2956.69

Նյութերի արժեքն ընդունված է 2026թ. N 03 «Ինֆորմացիոն տեղեկագրի» տվյալներով :

1.Նախագծային լուծումները համապատասխանում են ՀՀ օրենսդրության ու նորմատիվ փաստաթղթերի և նախագծային առաջադրանքի պահանջներին:

2. Նախագծի գծագրական մասը և մասնագրերը մշակված են միմյանց համապատասխան

3. Նախահաշվով նախատեսված ծավալները համապատասխանում են նախագծային ծավալներին

4.Աշխատանքային նախագծի կազմը համապատասխանեցված է ՀՀ քաղշին. նախարարի 11.09.2017 N 128-Ն հրամանով ամրագրված պահանջներին

5. Նախագծային լուծումներին առընչվող շեղումների վերացման ուղղությամբ առաջարկված փոփոխությունները, լրացումները, այլ ընտրանքային լուծումները քննարկվել են նախագծային կազմակերպության հետ համատեղ:

***Ուսումնասիրելով ներկայացված նախահաշիվը***

Փորձաքննությունը երաշխավորում է փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրության և նորմատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին, նախահաշիվը կարող է սահմանված կարգով պատվիրատուի կողմից ներկայացվել համաձայնեցման և հաստատման:

***Տնօրեն՝ Ն. Սիրեկանյան***